

հարելի պիտի լինի Սերեպրենիքովի կտակին յետնեալ տոհմոսները գտնածել և նոյն իսկ նորանոր կտակներով իւր ըարձր հովանաւորութեան ներքեւ եղող ու համակրանաց արժանացող հեղրոնականին էութիւնն ու գոյութիւնը միանգամ ընդ միշտ ապահովել:

Գ. ԱՃԷՄԵԱՆ (ՎԱՆԵՅԻ).

1904 յուլիս 20

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Այս տարի օգոստոսի 30 ին Բագէլ քաղաքում բացուեց հրօնների պատմութեան միջազգային կոնգրէսը, որը պէտք է շարունակուէր մինչև սեպտեմբերի 2 ը: Կոնգրէսի զբաղմունքները մասնադրուած էին ընդհանուր ժողովների, որաեղ և տեղի պէտքէ ունենային ընդհանուր հետաքրքրութիւն ունեցող զեկուցումներ՝ առանց քննադատութեան, և առանձին մասնախմբերի (սէկցիաների), որաեղ յատուկ նիւթերի մասին զեկուցումներ պէտք է կարգացուէին և ապա այդ զեկուցումները ենթարկուէին քննադատութեան:

Կոնգրէսում ենթադրուում էին հետևեալ 8 մասնախմբեր:

1. (Նախապատմական) նահապետական ազգերի հրօնները. Պերուանցիների և Մեկսիկացիների հրօնը.
2. Զինացւոց և ճապոնացւոց հրօնը.
3. Նգիպատացւոց հրօնը.
4. Սեմականների հրօնը.
5. Հնդկաստանի և Իրանի հրօնները.
6. Յունաց և հռոմէացոց հրօնը.
7. Գերմանացիների, կելտերի, սլաւոնների և ունգարացիների հրօնները.
8. Քրիստոնէական հրօնը: Կոնգրէսի պաշտօնական լեզուներ էին Գերմաներէնը. Անգլիերէնը, Ֆրանսերէնը և Իտալերէնը:

Ընդհանուր ժողովներում արդէն նախաորոշուած էին հետևեալ զեկուցումները:

Պրոֆէսսոր Գերման Ուզենների (Բօնն) «Կրօնն ու ըարոյահանութիւնը» Պրոֆ. Կոնրատ Ֆուրերէրի (ցիւրիխցի) «Կրօնների պատմութեան նշանակութիւնը քրիստոնէական աստուածա-

քանները համար», Պրոֆ. Կոլբախի—գեղարուեստի ազդեցութիւնը կրօնի վրայ եզրկատարութեամբ, Ասորաքարեւոյնութեամբ և էլլադայութեամբ (Յունաստանութեամբ), Պրոֆ. Սամուէլ Այվէսկեռիս (Զիւհադօ քաղաքից) «Survivole of Ancient Semitic Religion Sirian Centres of Moslom and Christian Influence». անդարդացած ազդեցիկ կրօնական հասկացողութիւնները:

Առաջին սեկցիայութեամբ պրոֆ. Զեյլէր (Բերլինից) պէտք է զեկուցանէր «Մեքսիքական կրօնի հիմնական գծերի մասին»:

Վենչեսլաւ Սերօշեակին (Վարշաւայից) պէտք է կարդար.— Այնոսների կրօնը եսօ կղզու վրայ: Երկրորդ սեկցիայութեամբ դօքտոր Լաուֆէր (Զինաստանից)—«Զինաստանի հրէաների պատմութիւնից» հիմնութեամբ նրանց թողած արձանագրութիւնները վրայ: Այնուհետեւ Մարտին Մայերը—քարոզիչ (Բերլինից)—Արգեօք շինացիք իրօք կրօնապէս անտարբէր են, և այլն: Այլ սեկցիաներում արդէն նշանակուած էին հետեւեալ զեկուցումները.—

Գիւլար (արեւելեան կենդանի լեզուների ուսուցչապետ Փարիզի համալսարանում) պէտք է կարդար.— «Մահմէդական ռաքիօնալիզմը X դարում»:

Տենդէրը—Հրէից կացութիւնը մարդկութեան զարգացման պատմութեան ընթացքում:

Առաքելեան՝ խմբագիր «Մշակ» լրագրի (Թիֆլիզում)—«Հայոց հին կրօնը»:

Ուսուցչապետ Կոլբախը—Ունգարիայի Պոլիթէյիզմի մասին»:

Սամուէլ Ֆրիս—(Ստոնհիւսթից) «Ինչ կնշանակի Աստուածաշնչի մէջ յիշուած «իշխան աշխարհիս այսմիկ» դարձումը» և այլն:

Յիշեալ համաթողովն արդէն կայացած է և հետեւանքի մասին կաշխատենք տեղեկութիւն առաւ ընթերցողներին, որքան մեզ հնարաւորութիւն կըտան լրագրական տեղեկութիւնները:

ՊՐԱԽՕՍԼԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Յունիս և յուլիս ամիսներին եկեղեցական հասարակական կեանքում տեղի ունեցաւ զգալի փոփոխութիւն.— 1) հրատարակուեց կառավարիչ Սենատի մեկնութիւնը տօնական հանգրոտութեան վերաբերութեամբ և 2) շնացող ամուսիններին, որոնք ամուսնալուծութեամբ զրկուած էին ամուսնանալու իրաւունքից, թոյլ տրուեց եկեղեցական որոշ ապաշխարութիւնից յետոյ, կրկին ամուսնանալ: Տօնական աշխատանքի և հանգստութեան վերաբերութեամբ եղած վէճը շատ և շատ